«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը»
ԱՌԱՐԿԱ	Քիմիա
ՀԵՂԻՆԱԿ	Գալստյան Թերեզա
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Գետքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԳՅՈՒՄՐԻ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1. Երեխաների ուսումնառության գործընթացի ընդհանուր նկարագիր……5

2. Ինչպես է մարդը սովորում , միջավայր, ինքնուրույնություն, հոգեբանություն դեռահասի հետ կատարվող պրոցեսներ……6

3. Ներառական կրթություն……10

4. Ներառական կրթության կարևորությունը……11

5. Կարիքների բացահայտում…… 12

6. Կարիքների բացահայտմանն ուղղված միջոցներ……13

7. Մեթոդներ, դասի սկիզբ, նոր նյութի բաց, սովորածը պարզելու հնարներ, դրանց կիրառում……17

8. Քիմիայի դերը, առարկայի կարևորության վրա շեշտը դնելու համատեքստում…… 18

9. Բազմազան այլ մեթոդներ……19

Եզրակացություն……22

Օգտագործված գրականություն ցանկ……24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիացի գիտնական Ալենը /Էմիլ Շարտիե/ **մանկավարժական լավագույն միջավայրը համարում է «մանուկների ժողովուրդը»**: Նա սահմանել է դաստիարակության ֆունկցիայի երկիմաստության գաղափարը, այն է.՝ **Երեխային «կյանքին պատրաստել, այդ կյանքի կառուցմանը նրան մասնակից դարձնելու միջոցով»:** Այս գործընթացում, իհարկե, կարևոր նշանակություն ունի դպրոցը և առկա կրթական համակարգը:

Հետազոտության արդիականությունն: Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը: Կրթական բարեփոխումների խելամիտ իրականացումը և արդյունքներն էլ ավելի կարևոր են:

Հայաստանի ապագան լրջորեն կվտանգվի, եթե կրթական բարեփոխումների արդյունքում չձևավորվի արժեքավոր մարդկային կապիտալ, որը կկարողանա զարգացնել երկրի տնտեսությունը: Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն:

Հատուկ կրթական համակարգի ներդնումը դպրոցներ ևս ծառայում է կրթական բարեփոխումներին և նպատակ ունի յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանն ու կրթության կազմակերպմանն իր համայնքում՝ առանց ընտանիքից մեկուսացնելու, և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովմանը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության մեջ ներառման գործընթացը կախված է այդ երեխաների նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատողների տեղեկացվածությունից: Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվում, որ այդ նա ստանա իր

կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով: Այստեղ ևս կրթական կարիքների բացահայտումը առանցքային նշանակություն ունի:

Հետազոտության նպատակն է

- Ուսումնասիրել երեխաների ուսումնառության գործընթացի ընդհանուր նկարագիրը,
- Դիտել հարցի հոգբանական կողմը
- Գալ եզրահանգման, որոնք ուղղված են երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտմանը,
- Այդ համատեքստում անդրադառնալ նաև ներառական կրթությանն ու հատուկ կարիքներ ունեցող երեխաների հարցերին,
- Վեր հանել խնդրից բխող առանձնահատկություններն ու
- Առաջարկել մեթոդներ, որոնք կլինեն քննարկվող առարկայի՝ քիմիայի, շրջանակում:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Քանի որ հանրակրթության ոլորտն ընդգրկում է լայն շերտեր, առաջանում է անհարժեշտություն հետազոտել այն թեմայի նեղ շրջանակում: Հետազոտության օբյեկտ է համարվում հանրակրթության ոլորտը, իսկ առարկան՝ երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Հետազոտության նորույթ: Հետազոտության նյութը կարող է մեծ նշանակություն ունենալ և հետաքրքրություն առաջացնել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի շրջանակներում:

Գիտական վարկած

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը կատարվել է իմ կողմից: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նման ուսումնասիրություններ անողների համար:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և գրականության ցանկից:

1.Երեխաների ուսումնառության գործընթացի ընդհանուր նկարագիր

Ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը ունի հետևյալ պարտականությունները.

1. Պաշտոնային պարտականություններ[1]

1) պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.

2) ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.

3) բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.

4) նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.

5) սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.

6) նպաստում է սովորողների մեջ ինքնակառավարման տարրերի ձևավորմանը.

7) հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.

8) հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.

9) համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.

10) համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.

[1] ՀՀ Սահմանադրություն

11) մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.

12) պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

Սրանք դրույթներ են, որոնք պետք է լինեն յուրաքանչյուր ուսուցչի ուշադրության կենտրոնում:

2.Ինչպես է մարդը սովորում, միջավայր, ինքնուրույնություն հոգեբանություն, դեռահասի հետ կատարվող պրոցեսներ [2]

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

[2] Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020



Այսպիսով՝ **սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն** է։ Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ։ Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան։ Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ։ Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն։

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը։ Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ։ Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից։ Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել։

2.2 Միջավայր, ինքնուրույնություն հոգեբանություն,

Գիտնականների մեծ մասը տարիքային շրջանի զարգացման առանձնահատկությունները հենց դպրոցի հետ է կապում: 7-11 տարեկան հասակում երեխաների ուսումնառության ընթացքում են զարգանում հոգեբանական շատ ֆունկցիաներ՝ մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը և այլն:

Այս տարիքում մտածողությունը թռիչքային զարգացում է ապրում, այն այլևս միայն պատկերացումներով չի իրականանում, համակարգային բնույթ է ստանում, «շրջելիություն է» ձեռք բերում, այսինքն՝ հնարավորություն է ստեղծվում փոխել մտքի ուղղությունը:

Դպրոցական ուսուցման ընթացքում աստիճանաբար սկսում են ձևավորվել տրամաբանական հիշողությունը և կամածին ուշադրությունը (երեխան ի վիճակի է դառնում կամային ջանքերի միջոցով կենտրոնանալ նյութի վրա):

Ուսուցիչները և ծնողներն են, որ սովորեցնում են նրան սովորել, և շատ կարևոր է, որ այս հանգամանքը նրանք քաջ գիտակցեն, կարողանան ուղղել երեխայի ճանաչողական պահանջմունքը դեպի ուսումնական առարկաները, սովորեցնեն ուսումնական խնդիրներ առաջադրել և լուծել: Այս գործում ահռելի դեր է խաղում խրախուսանքը. պետք է խրախուսել երեխայի ցանկացած հաջողություն, իսկ անհաջողությունների դեպքում ոչ թե վիրավորել, այլ համոզել, որ սխալներն անխուսափելի են և ժամանակի ընթացքում անպայման կվերանան:

Միջավայր

Կրթական միջավայրի հումանացումը հնարավոր է, եթե ուսուցիչը կարողանա ստեղծել. **ա/յուրաքանչյուր երեխայի բարեկեցությունն ապահովող միջավայր:** Հոգեբանական միջավայր, որտեղ յուրաքանչյուր երեխա զգում է իր պատկանելիությունը տվյալ համակեցությանը (դասարանին) և հարմարավետության զգացում ունի: Միջավայր, որտեղ ուսուցիչը հարգալից վերաբերմունք ունի երեխայի նկատմամբ և նրան հետաքրքրում են երեխայի զգացմունքները, գաղափարներն ու կյանքը: Մթնոլորտ, որտեղ երեխաները հնարավորություն ունեն ինքնադրսևորվելու: Շրջապատ, որը խթանում է երեխաների ճանաչողական և գործունեական սահմանների ընդլայնումը և դրանց զարգացման ու ուսուցման համար ընդունելի ռիսկերի գնալու անհրաժեշտությունը:

բ/ ֆիզիկական միջավայր, որը գրավիչ է, անվտանգ, առողջ, ներառական և խթանում է երեխաներին սովորել, լինել ինքնուրույն և զբաղվել հետազոտությամբ: Այսինքն, ուսուցիչը. ապահովում է ֆիզիկական միջավայրի անվտանգությունն ու նրա վերահսկողությունը: Հոգում է որ այն համապատասխանեցված և հարմարեցված լինի յուրաքանչյուր երեխայի կարիքներին, համապատասխանի նրա հետաքրքրություններին, հակումներին ու պահանջմունքներին, նրանց բազմազան գործունեության համար լինի գրավիչ:

գ/ սոցիալական միջավայր, որը նպաստում է երեխաների շրջանում համակեցության զգացումի զարգացմանը և խմբի, դասարանի մշակույթի ստեղծման գործում նրանց մասնակցությանը:

Հարմարավետ կրթական միջավայր ստեղծելու համար ուսուցիչը պետք է հավատա յուրաքանչյուր երեխայի զարգացման հնարավորություններին և ուժերին, կարողանա ճանաչել, հասկանալ և աջակցել սովորողներին, տիրապետի կոնֆլիկտները կանխարգելելու, լուծելու, մանկավարժական երկխոսությունային համագործակցություն և համատեղելիություն ապահովելու, կրթական միջավայրի բովանդակությունը համամարդկային և ազգային արժեքների զուգորդմամբ կառուցելու և դրանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու կարողություններին: Կրթական միջավայրի ձևավորման գործում կարևորվում է աշակերտակենտրոն մանկավարժական գործընթացի կազմակերպումը, աշակերտներին սովորել սովորեցնելու գաղափարի իրականացումը՝ ինքնուրույն ուսուցումը զարգացնելու միջոցով, որը ուսուցչին ստիպում է մտածել ինչպես համագործակցել երեխաների հետ, ինչ խնդիրներ դնել, ինչպես բարձրացնել նրանց պատասխանատվությունը ուսման նկատմամբ, ինչպես սովորեցնել աշակերտներին պլանավորել և ընդլայնել իրենց ուսումնառության հնարավորությունները:

Երեխաների մեջ **բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք** ձևավորելու և նրանց առողջ ապրելակերպի սկզբունքներով առաջնորդվելու հմտությունների փոխանցման ու յուրաքանչյուրին իր շրջակա միջավայրի ստեղծողն ու կառուցողը դարձնելու պահանջն է:

3.Ներառական կրթություն

Մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ ու հնարներ:

Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել:

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր երեխաների հանդեպ: Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ , չարություն : Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը: Ներառական կրթության համակարգում ստեղծվում են ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող/ԿԱՊԿՈՒ/անձանց համար: Ճկուն ուսումնական ծրագրերը կարևոր են դպրոցների զարգացման համար, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն:

Ժամանակակից մանկավարժության մեջ նշանակալից է դառնում **անձի զարգացման միջավայրային մոտեցումը:** Այստեղ առաջնային է այն գաղափարի ընդունումը, որ մարդը ձևավորվում է խմբակցության մեջ և դրա միջոցով: Եթե սովորողը գտնվի կրթական այնպիսի տարածքում, ուր խրախուսվում է սոցիալական համերաշխությունը, ներդաշնակությունը, փոխադարձ հարգանքը, ապա ինքն էլ կսովորի ապրել խաղաղ, առանց հակասությունների՝ միաժամանակ պահպանելով սեփական դեմքը և յուրակերպությունը: Ելնելով այս ամենից՝ ներառական կրթությունը դառնում է ժամանակակից մանկավարժության բաղկացուցիչ մասերից: Ձևավորելով հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքներով մարդկանց հանդեպ:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև

սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը:

Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը: Երեխաները միասին սովորելով՝ սովորում են նաև միասին ապրել, և հաշմանդամություն ունեցող երեխաներին ոչ թե պետք է խղճալ և դիտարկել միայն որպես խնամքի կարիք ունեցողներ, այլ նրանց նախևառաջ պետք է ապահովել որակյալ կրթություն և երեխայակենտրոն միջավայր: Սակայն ցավոք դեռ դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը այնպիսին չեն, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:

4. Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Ի՞նչ է անում ներառական կրթությունը

Նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է:

Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Փոփոխություններ բերելու համար պետք է աշխատենք մարդկանց հետ։ Փոփոխությունները սկսվում են մտքից։

Դպրոցի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովում է ուսումնառության առավել հաճելի միջավայր՝ լավագույնս բավարարելով ուսման ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին անհրաժեշտ պայմանները։ Բարձր դասարանների աշակերտների հետ անցկացված հետազոտության արդյունքները վկայում են, որ աշակերտներին դուր է գալիս համատեղ դասավանդումը և որ հնարավորության դեպքում կրկին կմասնակցեին համատեղ դասավանդվող դասերի։

5. Կարիքների բացահայտման, գնահատման գործընթաց

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական միջամտության մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու[3] համար։

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարքի գնահատումն իրականցվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը

Պետք է հիշել՝

- ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,

[3] Հանրակրթության մասին ՀՀ օրենք մաս1

- բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,

6. Կարիքների բացահայտմանն ուղղված միջոցներ

Ի՞նչ է դպրոցներում իրականացվող համատեղ դասավանդումը

Համատեղ դասավանդումը կարող է կիրառվել կրթական տարբեր միաջավայրերում՝ սկսած համալսարաններից մինչև տարրական և հիմնական դպրոցները: Համատեղ դասավանդումը մանկավարժների) կամ այլ մասնագետների գործընկերությունն է՝ դասարանի ներսում տարբեր կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար: Ներառական համատեքստում այն նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ խարանի նվազեցմանը և բոլոր աշակերտների ուսուցման բարելավմանը: Միաժամանակ, համատեղ դասավանդման զանազան մեթոդները աշակերտներին ընձեռում են ուսումնառելու տարբեր հնարավորություններ՝ դասապրոցեսին հաղորդելով բազմազանություն և ստեղծագործականություն:

Ի՞նչ պետք է անել

1. Ստեղծել բարյացակամ միջավայր:
2. Ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն:
3. Ընտանիքներին ընձեռել թիմի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու հնարավորություններ:
4. Մասնագետներ ներգրավելիս առաջնորդվել երեխայի անհատական կրթական կարիքներով:
5. Հնարավորության դեպքում աջակցություն ստանալ դպրոցի տնօրենից՝ համատեղ դասավանդման հայեցակարգը դպրոցի աշխատակազմին ներկայացնելով որպես ներառական պրակտիկայում առկա լավագույն մոտեցումներից մեկը:

Տարբերակված ուսուցման կարևորությունը կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տարբերակված ուսուցման կիրառումը կարևոր մոտեցում է. այն նպաստում է բոլոր աշակերտների կրթական կարիքները հաշվի առնելուն: Տարբերակված ուսուցման իրագործումը չի պահանջում թանկարժեք տեխնոլոգիաների կիրառում. այն կարող է իրականացվել նաև դասավանդման պարզ տեխնոլոգիաների միջոցով:

Բազմազան կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու երեք մոտեցումներ

Սովորողների բազմազանությունը հաշվի առնելով՝ դասարաններում պետք է կիրառել դասավանդման տարբեր մոտեցումներ:

Այս մոտեցումները ապահովում են բազմազան ձևերով դասավանդում և կարող են կիրառվել տարբեր առարկաների դասաժամերին, տարբեր դասարաններում: Դրանք ոչ միայն ուսումնառության վերջնարդյունքներն են բարելավում, այլև սովորելը դարձնում են ավելի հետաքրքիր՝ ապահովելով գործընթացի մեջ աշակերտի ներգրավվածությունը:

1. **դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառություն,**

2. համագործակցային ուսումնառություն,

3. անմիջական դասավանդում

Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառություն (Peer-assisted learning strategies (PALS)

Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառությունը հետազոտություններով արդյունավետությունը հիմանավորած դասավանդման ծրագիր է: Վերջինիս գլխավոր նպատակը աշակերտների ուսումնառությանը օժանդակելն է հասակակիցների միջոցով: Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառությունը նախատեսված է դասարաններում կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման և բոլոր աշակերտներին դրանում ներգրավելու համար: Քանի որ դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառության կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են իրենց դասընկերների հետ, ուսուցիչը կարող է աշակերտներին բաժանել նրանց անհատական կրթական կարիքներին համապատասխան նյութեր: Այս մոտեցումը կիրառելիս ուսուցիչը մի աշակերտին զգուշորեն դարձնում է մյուսի գործընկերը: Այնուհետև գործընկերները իրենց կրթական կարիքներին համապատասխանող զանազան աշխատանքներ են կատարում:

Փոխադարձ ուսուցում. Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառության ընթացքում աշակերտները միմյանց փոխարինելով ստանձնում են մերթ ընթերցողի, մերթ ունկնդրողի դերը:

Համագործակցային ուսումնառության (Cooperative Learning)

Համագործակցային ուսումնառությունը ռազմավարություն է, որը նախատեսված է բազմազան աշակերտներ ունեցող դասարանում, ցանկացած առարկայի շրջանակներում կիրառելու համար: Համագործակցային ուսումնառությունը նախատեսված է բոլոր աշակերտների ներառումը խթանելու համար: Այն գործիք է, որն օգնում է ուսուցիչներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավելու տարբեր ընդունակություններ և կարողություններ ունեցող աշակերտներին:

Անմիջական դասավանդման գործընթացը.



Անմիջական դասավանդմամբ ընթացող դասերը, որպես կանոն, անցկացվում են որոշակի պլանավորված սցենարի համաձայն

Ուսուցման մեթոդներ և հնարներ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել:

Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

7. Մեթոդներ, դասի սկիզբ, նոր նյութի բաց, սովորածը պարզելու հնարներ

Դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

1. **դասի սկիզբ,**
2. **նոր նյութի բացատրություն**
3. **սովորածը պարզելու հնարներ**

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին:

8. Պետք է շեշտը դնել առարկայի կարևորության վրա: Օրինակ քիմիայի պարագայում խոսել նրա մասին, թե ի՞նչ առաջնահերթություն ունի առարկայի ուսուցումը (ստորև նշված օրինակով)

- **Ամեն ինչ քիմիա է և քիմիական նյութերից**
- Անշուշտ անհնար է պատկերացնել ժամանակակից մարդու կյանքը առանց քիմիայի: Քիմիան օրեցօր թափանցում է տնտեսության բոլոր բնագավառները, ապահովում է արժեքավոր նյութերի ստացումը: Քիմիկոսների աշխատանքների շնորհիվ գիտությունը հասել է մեծ հաջողությունների: Քիմիայի արտադրության արդյունքներն առկա են բոլոր բնագավառներում՝ սննդի, մեքենաշինության, պլաստմասսաների, կաուչուկի և այլն: Տնտեսության զարգացումը, կապի, հեռահաղորդակցության, փոխադրամիջոցների կատարելագործումը, հասարակության կենսամակարդակի բարձրացումն անհնար է

պատկերացնել առանց քիմիայի: Իսկ եթե այսօրվա աշակերտը դպրոցում՝ քիմիայի ուսուցման դասընթացում չկարևորի քիմիայի դերը իր կյանքում, հասարակության կյանքում,ապա վաղը նա չի կարող դառնալ ապագայի կերտողը, արտադրությունը առավել արդյունավետ կառավարողը: Պետք է մեծացնենք սովորողների սերը դեպի քիմիան:

- **Քիմիան փորձարարական գիտություն է**: Նրա միջոցով ճանաչում են նյութերը, դրանց կառուցվածքը, հատկանիշները: Փորձերի միջոցով թափանցում են նյութերի զարմանահրաշ աշխարհը, հետաքրքրություն է առաջանում առարկայի նկատմամբ, աշակերտները առարկան կապում են կյանքի, կենցաղի, արվեստի ու գեղեցիկի հետ, ձեռք բերում զգուշություն՝ պահպանելով անվտանգության կանոնները, խորացնում են գիտելիքները, համեմատում, համադրում, ընդհանրացնում են կատարածը, տեսածը: Աշակերտներն պասիվ վիճակից հայտնվում են մասնակցի, կատարողի դերում: Յուրաքանչյուր մարդու մեջ կա անբացատրելի հետաքրքրություն և դրական վերաբերմունք դեպի անսովորը: Այդ պատճառով ցանկացած դաս կարելի է սկսել փոքրիկ, հետաքրքիր փորձի կատարմամբ: Շատ հարցեր են առաջանում փորձը կատարելիս, դիտելիս, որոնց պատասխանը իմանալը դառնում են այդ դասի պահանջը: Այսօր քիմիա սովորողի գործունեության կազմակերպման պարտադիր տարր են հանդիսանում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները /ՏՀՏ/, որոնք հանդիսանում են քիմիայի արդյունավետ ուսուցման կազմակերպման կարևոր տարր և դաստիարակության միջոց:

9. Օգտագործել բազմազան մեթոդներ

Օրինակ. **Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)**



Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ։ Պետք է ուղեկցել խոսքը պատկերներով։ Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են։ Ստորև ներկայացված են գծապատկերների մի քանի օրինակներ։



Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Միավորային գնահատում իրականացնելլ Quizizz[4] առցանց գործիքի միջոցով

Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում:

Quizizz առցանց գործիքը հնարավորություն է տալիս իրականացնելու հետևյալ աշխատանքները.

- միաժամանակ ստեղծել տարբեր թեմաներով և տարբեր քանակի հարցերից կազմված վարժություններ,
- պատրաստի վարժությունները խմբագրել, պահպանել առցանց,
- առցանց հետևել սովորողների առաջադիմությանը,
- հղմամբ տարածել պատրաստի վարժությունները,
- յուրաքանչյուր հարցի համար սահմանել ժամանակ,
- հրապարակման համար ընտրել լեզուն և սահմանել հասանելիության աստիճանը:

Ուսուցչակենտրոն մոտեցումից անցում աշակերտակենտրոն փուլի

[4] quizizz.com



Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը Մեկ այլ հետաքրքիր մոտեցում է հարցերի միջոցով ուսուցման փուլերի պլանավորումը: Ուսուցիչը պլանավորման գործընթացում պետք է պատասխանի **չորս հարցի:**

- Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:
- Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:
- Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:
- Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Այս հարցերին պատասխանելը հնարավորություն է տալիս պլանավորելու դասը, որի ընթացքում տեղի են ունենում ուսուցողական տարբեր գործընթացներ: Վերոնշյալը պարզ երևում է հետևյալ գծապատկերում:



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրության արդյունքում ևս մեկ անգամ հանգնում են այն եզրահանգման, որ կրթական գործընթացի կազմակերպումը պիտի հիմնված լինի կրթական կարիքների բացահայտման վրա:

Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը: Կրթական բարեփոխումների խելամիտ իրականացումը և արդյունքներն էլ ավելի կարևոր են:

Մենք՝ ուսուցիչներս, պետք է կարողանանք կազմակերպել այդ գործընթացը սահուն կերպով և սովորելու գործընթացը դարձնել հաճելի աշակերտության համար: Շեշտը դնել աշակերտակենտրոնության վրա և փորձել ամրացնել աշակերտ-ուսուցիչ կապը:

Ուսուցչի առաքելությունը պիտի լինի երեխային կյանքին պատրաստելը, այդ կյանքի կառուցմանը նրան մասնակից դարձնելու միջոցով, ոչ թե սոսկ առարկայական գիտելիք նրան տալը:

Յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմանն ու կրթության կազմակերպմանն ուղղված միջոցառումները պիտի շարունակական բնույթ կրեն և

պետք է պահպանեն կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսման սկզբունքների ապահովումը:

Ուսումնական գործընթացը մերօրերում անհնար է պատկերացնել առանց բազմազան մեթոդներ կիրառելու՝ յուրաքանչյուր դասարանի կարիքներին համապատասխան: Հենց կիրառվող մեթոդներից էլ կախված է անցկացվող դասի ադյունավետությունը և երեխաների աճը:

Խոսելով դիտարկվող առարկայի տեսանկյունից, քիմիա առարկայի շրջանակներում երեխաները մուտք են գործում նոր առարկայի դաշտ, նորատիպ, մյուս առարկաներից տարբերվող դեռևս ոչ շոշափելի և անիրական թվացող մի աշխարհ: Նրանք այս առարկան ուսումնասիրելով ձեռք են բերում նոր մտածողություն, որը տարբերվում է իր վերացականությամբ:

Այսպիսով առարկան մատչելի և հնարավորինս շոշափելի դարձնելու համար կարևոր է հմտություններն ու կարողությունները միակցելով և կիրառելով համապատասխան մեթոդներ, երեխաներին փոխանցել հնարավորինս շատ գիտելիք:

Կրթական միջավայրի հումանացումը հնարավոր է, եթե ուսուցիչը կարողանա ստեղծել. յուրաքանչյուր երեխայի բարեկեցությունն ապահովող ֆիզիկական և սոցիալական միջավայր՝ բացահայտելով և գնահատելով նրանց առանձնահատուկ կարիքները, քանի որ մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում էլ ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը կրթական գործընթացին:

Դպրոցը պիտի լինի վայր, որտեղից դուրս գալով երեխան պատրաստ կլինի կյանքի նոր փուլ մտնելուն՝ լի բազում հմտություններով և բազային գիտելիքներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. Հանրակրթության մասին ՀՀ օրենք
3. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014.
4. Agarwal, Pooja K. Powerful Teaching. Wiley. Kindle Edition.
5. Sherrington, Tom. Rosenshine's Principles in Action, John Catt Education, 2019
6. Taylor, K& Rohrer, D., "The Effects of Interleaved Practice", Applied Cognitive Psychology
7. Willingham, Daniel T. Why Don't Students Like School?
8. UNICEF ARMENIA զեկույցներ
9. Джуринский А.Н. "Зарубежная педагогика" Москва, Гардарики 2008
10. Декларация Конференций Организаций Обьединенных Наций по проблемам окружающей человека среды , Стокгольм 1972.
11. Практика внедрения принципов качественной педагогики ISSA, ЮНЕСКО, 2015